

ՄԵՆԿ

Տարեկան գինը 10 բուրլի, կէս տարեկանը 6 բուրլի.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թարգմանում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են
իրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Մահմետական և քրիստոնէական քաղաքակրթութեան սկզբունքները. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ներքին լուրեր. — ՍՍՍՐ-ԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր. — ԽԱՌԻ ԼՈՒՐԵՐ. — ՀԵՌԱՅԻՐՆԵՐ. — ԲՈՐՍՍ. — ՅԱՅԱՍՏԱՆԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Աւազանները բռնվում են:

ՄԱՀՄԵՏԱԿԱՆ ԵՒ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԲԱՎԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՍԿԶՈՒՆԵՐԸ

Քրիստոնէական քաղաքակրթական ըսկզբունքը, որի հիման վրա և զարգացել է ամբողջ եւրոպական քաղաքակրթութիւնը, — մարդկային ազատութիւնն է:

Մահմետական քաղաքակրթական ըսկզբունքը ստրկութիւնն է:

Քրիստոնէական քաղաքակրթական սկզբունքը ազատում է անհատի հոգեւոր դրսի կապանքներից, խոչնդոտներից, տալիս է նրան լայն ասարակէջ զործունէութեան, ճիշդում է նրա մէջ ինքնաշնչաւորութիւն, զարկ է տալիս նրան զործելու իր սեփական պատասխանատուութեամբ:

Մահմետական քաղաքակրթութիւնը ուրիշ բան չէ, եթէ ոչ կրօնական օրէնքի մշտական խնամակալութիւնն, մարդու հոգեկան կեանքի վրա: Մահմետական կրօնական կառավարչութեամբ մարդու ինքն պատասխանատու չէ իր վարմանը. համար, այլ ամեն բանում նա գտնվում նախախնայման, ճակատագրի, փառայիլի խնամակալութեան տակ, նրա իւրաքանչիւր արած բայը կախված է ճակատագրի կամ քիչ. պարզ է որ այդ տեսակ հայեացքը ամենամեծ խոչնդոտ է կանոնաւոր առաջադիմութեան: Մարդու հասարակական և ընտանեկան կեանքի վերաբերմամբ մահմետական քաղաքակրթութեան հայեացքը նոյնպէս հետեւում է անսահման խնամակալութեան պրինցիպին, սահմանափակում է մարդու ազատ կամքը, խլում է նրանից կեանքի մէջ իր անհատական պատասխանատուութեամբ զործելու իրաւունքը: Բաւական է կանգնում մահմետական օրէնքը դատում է այսպէս. որովհետեւ այս կամ այն մարդը կարող է մի օր և է յանցանք զործել, — ուրեմն առաջուց արդէն պէտք է

խստութեամբ վարվել պետութեան բոլոր հպատակների հետ: Որովհետեւ պետութեան հպատակ այս կամ այն պայմանից պատկանող այս կամ այն անհատը կարող է մի քայլ անել, որը իր բնաւորութեամբ հակառակ կը լինի մահմետական պետութեան ամբողջ կազմակերպութեան ոգուն, — ուրեմն պէտք է առաջուց սահմանափակել ամբողջ ցեղի քաղաքացիական իրաւունքները: Որովհետեւ տպագրական խօսքը կարելի է չար գործ ածել, — ուրեմն պէտք է սահմանափակել խիստ օրէնքներով ամբողջ մամուլն ու գրականութիւնը: Հասարակական-քաղաքական կեանքի շարժումն էլ մահմետական հայեացքը նոյն կերպ է գործում. որովհետեւ այս կամ այն անհատը կարող է հարբել, — ուրեմն պէտք է արգելել զինի զործածելը ամբողջ ազգին, որովհետեւ այս կամ այն մարդու կինը, ազատ շրջելով հասարակութեան մէջ, հանդիպելով մարդկանց, կարող է իր մարդու փոխարէն սիրել մի այլ մարդուն, կարող է անհաւատարմ լինել իր մարդուն, — ուրեմն պէտք է բոլոր կանանց փակել հարեմի մէջ... և այլն:

Մի խօսքով մահմետական քաղաքակրթական սկզբունքը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մշտական խնամակալութիւն մարդու քաղաքացիական, ընտանեկան, մտաւոր, հոգեկան, հասարակական բոլոր ֆունկցիաների վրա: Մարդու իրաւունքները առաջուց սահմանափակվում են, որպէս զի նա ի չար չը գործածէ իր անհատական առանձնապատկութիւնները, ընդունելով որպէս անհրաժեշտ ճշմարտութիւն, որ մարդկային արարածը, խնամակալութիւնից դուրս, չէ կարող լինել, իր ազատ կամքով զործարարել իր մարդկային ֆունկցիաները առանց սխալի մէջ ընկնելու, առանց յանցանք զործելու, առանց անբարոյական դաւաճելու, առանց իրան ու իր նմաններին վնասելու...

Արդէն մոլորական կրօնը անչափ աւելի ազատամիտ և առաջադէմ է քան մահմետականը, որը սակայն առաջինից աւելի ուշ է յայտնվել: Հին կտակարանի լեզունքով Աղամի և Եւայի վերաբերմամբ ցոյց է տալիս, որ աստուածային հրամանով առաջինը, որ աստուածային կրօնը աքսորվել են զրախտից, այսինքն անբարոյ, երջանիկ կեանքից և նոյն հրամանով նետվել են փո-

թորակել երկրային կեանքը, որպէս զի իրանք իրանց անձնական ոյժերով հաց ձարին իրանց ճակատի քրտինքով, իրանք իրանց անձնական պատասխանատուութեամբ ապրել: Քրիստոնէութիւնը, որը բուռն է մոլորական հոգի վրա, աւելի է հեռու է գնացել, որովհետեւ մարդու անձնական բարոյական պատասխանատուութիւնը: Նա աւել է. «սիրել ուրիշին, ինչպէս ինքդ ջո անձն ես սիրում», կամ «մի արա ուրիշին այն, ինչ որ չես ուզում որ քեզ անեն»:

Քրիստոնէական սկզբունքների վրա զարգացած եւրոպական լայն, շերտ, փայլուն, ազատամիտ քաղաքակրթութիւնը նոյն իսկ քրիստոնէական գաղափարների վրա է հաստատել իր ամենաէական սկզբունքները. «ամենքը մէկը համար և մէկը ամենքի համար», կամ «ամեն մարդ պէտք է անսահման կերպով վայելէ իր մարդկային բոլոր իրաւունքները իր անձնական պատասխանատուութեամբ»: Եւ նոր սկզբունքներ բոլոր իրաւունքները իր անձնական պատասխանատուութեամբ քաղաքակրթութեան:

Վերջապէս զրանցից ծնվել է և ժամանակակից այն սկզբունքը, որը ուրիշում է ինչ ինչ բան է ազատութիւնը. «ազատ լինել, նշանակում է անսահման և անպայման կերպով վայելել իր մարդկային, անհատական բոլոր իրաւունքները, ազատ զործարարել իր բոլոր անհատական առանձնապատկութիւնները այն չափով, որ չափով այդ առանձնապատկութիւնների զործարարելը չէ վնասում ուրիշների ազատութեանը»:

Եւ մենք դրան կաւեւանքներ. այն չափով, որչափով դրանց զործարարելը չէ վնասում և իրան մարդուն»:

Եւ իրաւ, ժամանակակից քրիստոնէական աշխարհի քաղաքակրթութիւնը ուրիշ բան չէ, եթէ ոչ մարդու անձնական պատասխանատուութեամբ նրա անընդհատ մաքառումն յօգուտ իրան և յօգուտ մարդկութեան:

Այդ բաւական չէ քաղաքակրթական սկզբունքը, դարձնելով մարդուն պատասխանատու իր բոլոր արածների համար, ստիպում է նրան անընդհատաբար ներքին կռիւ մղել իր սեփական անձի դէմ, անընդհատաբար մաքառել իր սեփական պակասութիւնների դէմ, չափաւորել իր սեփական կրեքերը: Ուրեմն քաղաքակրթութիւնը մարդու անընդհատ կռիւ է նմանապէս և իր սեփական անձի դէմ:

Այսպէս կեանքի ամենասովորական, բնական արարողութիւններից, ուտելուց և խնամելուց և վերջացնելով մարդու ամենաբարձր հասարակական առանձնապատկութիւնների զործարարելով քաղաքակրթ մարդը ամեն տեղ կամաւոր կերպով դնում է իր եսը խիստ կանոնների, խիստ դիպչիկ լինայի տակ: Հիմարիտ քաղաքակրթ մարդը ուտում է չափաւոր կերպով, այնքան, որքան այդ անհրաժեշտ է իր ֆիզիկական ոյժերը պահպանելու համար, խմում է ոչ թէ հարբելու, այլ միայն իր ոյժերը կազդուրելու համար, նա ենթարկում է խիստ դիպչիկ լինային և իր ֆիզիկական ու մտաւոր աշխատանքը, ենթարկում է նոյն դիպչիկ լինային և իր մարդկային կրեքերը, երբ նա վերաւորված է, անարգված է մի այլ մարդուց, նա չէ դիմում կամայական դատաստանին, այլ հաստատված դատաստանի վճռին (այդ է պատճառը, որ անաթոլիայով դատելով է պատերազմն էլ հակաքրիստոնէական գործ է), նա հապաքական ժողովներում չէ հասցնում վէճը կռիւն, այլ դիմում է հասարակաց կարծիքին, խոնարհվում է իր կամքով ընտրված նախագահի որոշումներին, հասարակական կեանքում նա հնազանդվում է իր կամքով ընտրված վարչական մարմիններին, նա վայելելով խօսքի և տպագրութեան կատարելապատկութիւնը, իր անձնական պատասխանատուութեամբ քաղաքակրթութիւնը, որպէս կատարելապատ և իրաւագոր քաղաքացի, սակայն խօսքով կամ տպագրական ձևաւորարչով յանցանք զործելու ժամանակ նա ենթարկվում է երկրի ընդհանուր օրէնքին, դատաստանի վճռին, ինչպէս ամեն ուրիշ քաղաքացիական յանցանքում: Հիմարիտ քաղաքակրթ մարդը սիրում է կնոջ, բայց սիրում է այն չափով, որքանով սերը չէ վնասում ոչ իր ֆիզիկական թարմութեանը, ոչ էլ իր մտաւոր ու հոգեկան ընդունակութիւններին, չէ հասցնում իրան անանական դրութեանը, ճշմարիտ քաղաքակրթ մարդը ոչ իր անձը պէտք է ստրկացնէ, սիրոյ զգացմունքներ, ոչ էլ պէտք է ըստրկացնէ իր սիրոյ պահանջին կնոջ մարդկային արժանաւորութիւնն ու նրա ազատութիւնը: Հիմարիտ քաղաքակրթ մարդը սիրոյ զգացմունքից պէտք է օգուտ քաղէ, որպէս զի ինքն բարոյապէս մաքրվի, բարձրանայ, այդ զգացմունքը պէտք է մի և

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԲՈՎԱՆԻՍՏ ԵՆ

(Պատկեր)

III

— Նրա մտքը... գոռաց կաղին, որ այդ օր եկել ըննիչի սենեակը՝ կամենում էր լսել թէ թուանջի և ջիթողի գիւղացիք ինչպէս պիտի ընկնին:

Երկու գիւղացիներից ըննութեան հրաւիրվել էին տասը խամբաներ, ի թիւս որոց կային երկու գիւղի տանուտէրները:

Գիւղացիները իրանց կօշիկները դրան մօտ հանեցին և ներս մտնելով մինչև կէս մէջը խոնարհութեամբ արին կաղին և ըննիչին:

Գննիչը նստել էր մի ծուկը բարձրացրած և կիսովին ուղրած տաճկական թուղթը ձեռքին:

Նա մի հետաքրքիր ակնարկով նայեց բոլորին, մտայ դարձաւ մի ծերունու և հարցրեց.

— Դու որ գիւղի մէջ ես (տանուտէր):

— Միւղիւր ես չեմ:

— Ուրեմն երկու գիւղի միւղիւրները թող առաջ գնան:

— Ի՞նչ էք միւղիւրները:

— Մենք ենք:

— Ո՞րն է թուանջի միւղիւրը:

— Ես եմ, առաջ եկաւ հասակաւորը:

— Պատմիր դէպքը, հրամայեց ըննիչը և պատրաստվեց գրելու:

Տանուտէրը հաղաց, ձեռքը բերին տարաւ, իր ընկերներին նայեց և սկսեց.

— Եֆէնդի...

— Սպասիր, ընդհատեց նրան ըննիչը.— երբ աւազակները յարձակվեցին, դու ձրտեղ էիր:

— Ես ընել էի... որ աղմուկ բարձրացաւ, վեր թռայ և վազեցի:

— Հաստ էին աւազակները:

— Տաս հոգի կային:

— Իսկ նրանց վրա յարձակվողներդ քանի էիք:

— Մենք չէինք յարձակվում, Եֆէնդի, ասեց տանուտէրը.— մենք հեռուից կանգնած նայում էինք:

— Գննիչը կաղիին նայեց հարցական դէմքով. կաղին զլխովը դրական պատասխան տուեց:

— Լսիր, միւղիւր, դարձաւ ըննիչը գիւղացուն,

— դու ասում ես որ չէք յարձակվել, ուրեմն ովքեր էին որ գողգողալով և զենքերով թափվեցին:

— Այդ մենք էինք, Եֆէնդի, խօսեց ջիթողի տանուտէրը.— երբ մեր գիւղը հաւար եկաւ, մենք բաժնու փայտ առինք և վազեցինք թուանջ:

— Սուր և հրացան էլ ունէիք հետներդ:

— Միտա չէ, ասեց տանուտէրը:

— Լաւ ուրեմն որ այդ միտը չէ, գոնէ միտը է թէ ով էր աւազակներից մէկին սպանողը:

— Սպանողը... միմեանց երեսին նայեցին գիւղացիք ապշութեամբ.— սպանողը չէ եղել աւազակներից:

— Լսեցէք, գոչեց խտտութեամբ կաղին.— գետնուրին, դուք սպանել էք ոչ միայն մի միւսիւրմանի, այլ և մահու չափ վիրաւորել էք երկուսին...

— Եւ, աւելացրեց ըննիչը ծանրութեամբ.— հարուածները ետեկց են... օրէնքը մարդապան է ձանաչում ետեկց հարուածողներին, եթէ անձնապաշտպանութեան ժամանակ իսկ եղած լինի դա: Գիւղացիները սարսափեցին և չը գիտնալով ինչ պատասխանել, սկսեցին դողալ:

— Սուր շատ ձիւղ է, մէջ մտաւ կաղին.— ես էլ հէնց այդ էի մտածում թէ այս գետնուրինների երեսին ամօթ ասած բանը չը կայ, որ եկել— զանգաւորում են երեք այնպիսի խեղճերի վրա, որոնք երդվում են որ ոչնչի մէջ իրանք չեն մասնակցել:

Ահա այդ ժամանակ էր, որ թուանջիների միջից դատվեց մէկը և առաջ դալով կանգնեց իրանց տանուտէրով մօտ: Նա իր հագուստով դանդաղում էր միւսներից նրանով, որ փոխանակ կարճ բաճկոնակի, հագնել էր եւրոպական երկար վերարկու, իսկ ոտներին ունէր փոխանակ տրեխի, եւրոպական կօշիկ:

Երեւում էր որ այդ թուանջին աւելի չափ մարդու երես և աշխարհ էրջտեսել քան իր հայրենակիցները: Նա բոլեց քէնային և նրանից էլ առաջ դնելով իր մի օտը, համարձակվեց պատասխանել կաղին այսպէս.

— Բէյ Եֆէնդի, աւազակներ յարձակվեցին մեր գիւղի վրա, մեր տաւարներին ու կանանց սկսեցին տանել, մեզ սպանել ու տանջել... Երբ գալլը յարձակվում է վրադ, եթէ գէշը ունիս պաշտպանվում ես, եթէ չունիս՝ կամ զոհվում ես կամ փախչում, իսկ մենք մի այնպիսի բան արինք, որ ձերը մեծութիւնը զոհ պիտի լինի, որովհետեւ մեր արեւը թափեցինք, բայց մեր ձեռքի զենքերով փոխանակ զայլերին սպանելու՝ նրանց բռնել աշխատեցինք. ուրեմն մենք սպանեցինք, վիրաւորվեցինք, բայց գալիւրին վնաս չը տուեցինք: Այս այսպէս:

Կաղին և ըննիչը բերանները բացարած դարձան մօտ նայում էին այդ տարօրինակ գիւղացուն. նրանց երբեք չէր հանդիպել, որ մի գիւղացի համարձակվի պատասխանել և որը պիտաւորն է, այդպէս չլրբութեամբ պատասխանել:

Օսմանեան դատաւորների կարծիքով լրբեր են նրանք, որոնք դատաւորներին հակադաւալում են կամ նրանց մօտ տրամաբանութեամբ խօսում:

— Գալով նրան, շարունակեց գիւղացին.— որ դուք ասում էք թէ մենք աւազակներից մէկին սպանել ենք, իսկ երկուսին վիրաւորել, ես հա-

նորն ժամանակ իր աչքում ոչ թէ ստորացնել, այլ ընդհակառակն սրբացնել կնոջը, բայց սրանից, սիրոյ զգացմունքից, որպէս հասարակական-բարոյական հզօր ֆակտորներ իմենից, քաղաքակրթ մարդը պէտք է օգտվի, որպէս մի բարոյականացնող, ստեղծող ոյժից, իր բոլոր մարդկային առանձնայատկութիւնները, իր ընդունակութիւնները, իր տաղանդի աւելի լայն կերպով զարգացնելու, աւելի շքեղ կերպով ծաղկեցնելու, նրանով ողբերկելով մարդկային հասարակութեանը աւելի պիտանի դառնալու, աւելի շօշափելի կերպով մարդկութեան շահերին ծառայելու համար...

Մահմետական և քրիստոնէական հակառակ վարդապետութիւնների հօդի վրա ծընված երկու քաղաքակրթութիւնների տարբերութեան վրա ներկայ յօդուածում մատնացոյց անել ջանալով, մենք ուզեցինք շեշտել այն հանգամանքի վրա, որ մեր հայոց հասարակութիւնը, ինչքան էլ ի բնէ սիրահար լինէր եւրօպական քաղաքակրթութեան, ինչքան էլ դրական հակումն ու ձգտումներ ունենար դէպի քրիստոնէական սկզբունքից ծնված ճշմարիտ քաղաքակրթութիւնը, — սակայն մինչև այսօր հայոց տարրը, դարերից ի վեր երթարկված լինելով մահմետական քաղաքակրթութեան ազդեցութեանը, աւանդաբար և բնականապէս աւելի խորոված է մնացել մահմետական քաղաքակրթութեան սկզբունքներով, քան քրիստոնէական լայն դադարներով, որոնք և ծառայել են որպէս հիմք այժմեան համամարդկային, եւրօպական պայծառ, շքեղ և փայլուն, միշտ առաջադէմ քաղաքակրթութեան, որի ազատարար շունչը դարձնում է թէ մարդուն և թէ կնոջ՝ ազատ, հաւասար, աւելի բարոյական, աւելի ընդունակ, աւելի ստեղծագործող:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՆԵՐ

Մենք իմացանք, որ ծերունի Մակգոնալդ, անգլիական յետադէմ լրագրների թղթակիցը, ուրեմն սաստիկ թիրեքստեր մի անձնաւորութիւն, գիտաւորութիւն ունի այս տարի նորից մի ճանապարհորդութիւն անել թիրեքս Զայաստանում: Անցեալ ամառն էլ նոյն պարոնը էրգրումումն էր:

Մենք յայտնեցինք արդէն, որ երիտասարդ հայ երգիչ պ. Ս. Եղիազարեան, իր ընկեր պ. Աֆրեկեանի հետ, հասնելով այս օրերս Բագու, այդ քաղաքից եկան են մեզ օրում, Թիֆլիս, որտեղ մօտաւորապէս սեպտեմբերի 8-ին տալու են մի կօնցերտ մեր քաղաքի դահլիճներից միում: Ուրախութեամբ սպասում ենք պ. Եղիազարեանի կօնցերտին, որի հրաշալի բարիտօն ձայնը մենք բոլորս դեռ յիշում ենք: Հետաքրքիր է լսել և պ.

մարձակովում եմ խնդրել, որ բարեհաճէ հրամայել մեզ ցոյց տալու սպանվածը և վիրաւորվածները և կամ այն տեղեկագիրը, որի մէջ ապաստված է թէ մենք, յարձակման ժամանակ, աւաղան ենք սպանել...

Այլ ես գիմանալ չը կարողացաւ կադին, նա գունաթափվեց, չըթուները կծեց և միջահատելով յանդուգն գիւղացուն, գոչեց.

—Ո՛վ ես դու, անասնօք գիւղացի, որ համարձակվում ես ոչ միայն սուտ հանել մեզ, այլ և չը հաւատալ, միթէ դու չը գիտես, որ օրէնքով կադին և քննիչը բացարձակ ճշմարտախօս են համարվում:

—Ես այդ գիտեմ, պատասխանեց գիւղացին—բայց այս էլ գիտեմ, որ վեց օր շարունակ գիւղը եկող ըննիչներն անգամ, երբ գործը քննելով տեսնում էին, որ մենք ինքներս սպանվել, վիրաւորվել ենք, իսկ աւաղաների մի կաթիլ արիւնն անգամ չենք թափել՝ ծիծաղում էին մեզ վրա և ասում չեղանք, որ գիտենանք թէ բոլոր հայերը այդպէս են, կը թողնենք մեր պաշտօնը և աւաղակութիւնով կը դադարենք... ես այս խօսքերը ասում եմ ոչ թէ ինձնից, այլ ամբողջ գիւղացիների լաճներից. բայց, բէլ էֆէնդի, օրէնքով, քաղաքային բժիշկը քննելուց յետոյ սպանվածներին կամ վիրաւորվածներին տեղեկագիր է տալիս. ցոյց տուէք ինձ այդ տեղեկագիրը:

Աֆրեկեանի տեսնող ձայնը, որի մասին շատերը վկայում են, թէ արտակարգ ձայն է: Կօնցերտի պրօգրամը կը բաղկանայ՝ դանազան օպերաների կտորներէից, ապա այլ և այլ բոմաններէից, թէ ուսուց, թէ հայոց և թէ իտալական լեզուով:

ՄՕՍԿՎԱՅԻՑ մեզ դրում են, չէրկայ օգոստոսի 11-ին, Պետերբուրգից Մօսկվա գալով, դրեցի աւաղ-քահանայ տէր Ստեփան Տէր-Ստեփանեանց, տեղիս հայոց եկեղեցում մի աղղու քաղաք խօսեց, որից յետոյ հրաւիրեց ներկայ ժողովականներին աղօթակից լինել իրան Լազարեան տոհմի, հանդուցեալ Մ. Էմիլի, Ս. Նազարեանցի և Մ. Մսերեանցի հոգեհանգստին, որը և կատարվեց նոյն օրը փառաւոր կերպով:

Հազար անգամ խնդրել ենք և դարձեալ խնդրում ենք մեր բաժանորդներին, որ հասցեն փոխելու ժամանակ յայտնեն ոչ թէ միայն այն քաղաքի անունը, որտեղ պէտք է ստանան լրագիրը, բայց և այն քաղաքի անունը, որտեղ մինչև այժմ ստանում էին Մշակը: Սակայն ոչինչ չէ օգնում. դարձեալ ստանում ենք հետեւեալ նամակներ. «այսուհետեւ ձեր պատճառական լրագիրը խնդրում եմ ուղարկել Մօսկվա, հետեւեալ հասցեով»: Նամակի մէջ իրաւ գրված է հասցեն, և նամակի մէջ ներկայված է 4 հատ 7 կօպէկանոց մարկա... Բայց թէ ձրտեղ դրանից առաջ ստանում էր մեր լրագիրը իրեալ պարոնը՝ նամակում գրված չէ... Հիմա արի ու բաժանորդներին ամբողջ մատենանք քրքրիր, որ դտես թէ պատճառական պարոնը, Մօսկվա գնալուց առաջ ձրտեղ էր ըստանում մեր լրագիրը: Նրեի պարոնը երևակայում է, որ ինքն այնպէս մի յայտնի անձնաւորութիւն է, որ խմբագրութիւնը չէր կարող նրան չը ճանաչել, կամ կարծում է, որ խմբագրութիւնը հնար ունի բոլոր 1,400 բաժանորդների անուններն ու նրանց բնակիչութեան տեղը անգիր յիշել:

Այսօր, հինգշաբթի, սեպտեմբերի 5-ին, լինելու է Թիֆլիսի քաղաքային թատրոնում կ. Պօլսից եկած նոր հայոց թատրոնական խմբի առաջին ներկայացումը:

Թիֆլիսի խմբակը կատարելապէս հովացաւ Ամբարնոցներից ամենքն արդէն վերադարձան և այդ պատճառով քաղաքը կրկին իր սովորական կենդանութիւնն ընդունեց:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Թափրիզ, օգոստոսի 20-ին

Արդեօք լուսաւորվել ենք մենք, թէ ոչ: Այս հարցին, եթէ ոչ բոլոր հայերը, գուցէ նրանց մէջ գտնվում են շատերը, որ պատասխանեն. «այո՛ւ, լուսաւորվել ենք»: Եւ յիշաւ, այդ

—Միթէ դու կարդալ գիտես, հարցրեց քննիչը, որը նոր էր դուրս գալիս ապօրինի:

—Գիտեմ, խօսեց գիւղացին:

Իսկ կադին, որ աւելի և աւելի կատաղել էր, ցատկեց դէպի նրան, բռնեց թիւղ և գոռաց.

—Դու համարձակվում ես քննիչներին ամբաստանել... ես քեզ ցոյց կը տամ... զաթթի... բանտը սրան...

Դրան մօտ կանգնած զաթթին մօտ եկաւ:

—Բանտ այս գեաւորին, գոռաց կադին—սա, ինչպէս երևում է, փախստական մէկն է:

—Սխալվում էք, բէլ էֆէնդի, ժպտեց գիւղացին—ես անցագիր ունեմ և ամենքը կարող են վկայել, որ ես էլ այնպէս թուանջի եմ, որպէս սրանք... ինձ բանտարկելը ձեզ օգուտ չի բերի, որովհետեւ ես կը բողոքեմ և այն ժամանակ հետեւանք վատ կը լինի:

Կադին մի մեծ քրքիշ արձակեց, յետոյ գնաց իր նախկին տեղը նստելու և ասեց ծիծաղելով.

—Դրա է, քեզ բանտարկելը մեզ մնաս է, կառավարութեան հացը պիտի ուտես ճրիպպէս... ես քեզ չեմ բանտարկել այժմ... բայց խօսքերդ զրկեցին... մենք քեզ հետ էլի կը տեսնվենք այն ժամանակ, երբ քեզ կը վճենք աքսոր ուղարկելու... քննիչ, գրել սրա խօսքերը...

Բանից դուրս եկաւ, որ այդ յանդուգն գիւղացին

«այո՛ւ» ասողների կարծիքով, լուսաւորվել ենք, որովհետեւ հաջնվում ենք այնպէս շքեղ, մաքուր և մօզային համեմատ, որպէս եւրօպացիները և աշխարհիս կրէստները—ամերիկացիները, ուսումնաւորները համարում կերակուրներ, որպիսիները գործ են ածվում Ամերիկայի նման հարուստ և լուսաւորեալ երկրում, բնակվում ենք հոյակապ շինութիւններին մէջ և միմեանց պատահելիս այնպիսի կոմպլիմենտներով ենք քաղաքավարութիւն ցոյց տալիս, որպիսիները յատուկ են միայն Պաւլիի և Լօնդօնի շքեղազգեստ մադամներին և օրիւրներին:—Այո, լուսաւորվել ենք, որովհետեւ ունենք զբաղանդութիւն, բազմաթիւ դպրոցներ մեծամեծ քաղաքներում և մատենադարան-քննութեարաններ... լուսաւորվել ենք, որովհետեւ ամենայն խնդիրներ մեր մէջ քննադատութեան տակ են ընկնում և քիթն ու պոռնոգը կտրատված դուրս գալիս այդ անթիւծ քննադատութեան սաստիկ ուժի տակից ու փախչում, վերջապէս լուսաւորվել ենք, որովհետեւ եւրօպականութիւնը և ամերիկականութիւնը իրանց արտաքին տեսքով իւրացրել ենք մեզ և հետեւապէս դարձել ենք կատարեալ եւրօպացիներ և ամերիկացիներ, ոչնչով նրանցից պակաս չենք և մինչև անգամ, այդ «այո՛ւ» ասողների կարծիքով, նրանցից բաւական ենք և առաջ ենք գնացել լուսաւորութեան և դիտութեան մէջ:

Բայց ոչ. դա լուսաւորութիւն չէ. իւրաքանչիւր ազգ մի այն արտաքին ձևական փոփոխութեամբ չէ կարող լուսաւորվել, նրան հարկաւոր է նաև հոգին, սիրտը և ուղեղը այդ ձևականութեան տարածվելու չափ առաջ մղել, ցնցումն տալ, կրօն, աւելի լաւ է ասել, հոգին, սիրտը և ուղեղն եւրօպականացնել—դարձեալ այնպէս, ինչպէս որ են ճշմարիտ եւրօպացու հոգին, սիրտը և ուղեղը: Հիմարիտ լուսաւորութիւնը նրանումն է կայանում, որ մենք արտաքին կերպով նմանվելով եւրօպացուն՝ պիտի նմանվենք նաև ներքին կերպով, պիտի անհնձ այն, ինչ որ անում է ճշմարիտ եւրօպացին:

Սակայն չը պէտք է ուրանալ այն, որ մեր մէջ գտնվում են լուսաւորեալ անհատներ, բայց այդ լուսաւորեալ անհատներն էլ դժբաղդաբար բաժանվում են երկու տեսակի—ճշմարիտ լուսաւորեալներ և կեղծ լուսաւորեալներ. ճշմարիտ լուսաւորեալներին կարելի է մատնել վրա հաւել, որ շատ տխրալի է, իսկ կեղծ լուսաւորեալները մեծ քանակութիւն ունեն, որը նոյնպէս շատ տխրալի է: Հիմարիտ լուսաւորեալ անհատները նրանք են, որոնք բռնել են դէպի ճշմարտութիւն, լուսաւորութիւն և քաղաքակրթութիւն տանող շաւիղը և առաւելորդում են ժողովրդի մի մասը—գիւրաւորապէս ռամիլ մասը—այդ շաւիղով և ռամիլ ժողովրդի լուսաւորութեան, քաղաքակրթութեան համար գոհում են իրանց ունեցած սեփական դրամական, նիւթական և մտաւոր կարողութիւնը, որովհետեւ այդպիսիների համար աշխարհն իրօք ռուսայնութիւն իւսայնութեանց է, իսկ իրանց ունեցած դրամական-նիւթականը՝ մի բաժանվող ընկեր կեանքի վերջին բօլպէս—մեռ-

ցին Թուանջի վարժապետն էր Մանուէլ անունով. դա ուսել էր կ. Պօլսի, երկար ժամանակ ճանապարհորդել Ռուսաստանում և վերջապէս, որ առաւել էր, կարծես երեսփոխանական ժողովի անդամ էր՝ իբր գիւղերի ներկայացուցիչ:

Բայց նրա բողոքը և յանդուգն պատասխանը ոչինչ նշանակութիւն չունեցան, որովհետեւ քննիչը կռանալով դէպի կադին՝ մի քանի խօսք փոխանց նրա ականջում և այդ կերպով նրանք 5 րօպէ միմեանց հետ խորհրդակցելուց յետոյ, հրամայեցին գիւղացոյց՝ հեռանալ:

—Գնացէ՛ք, ասեց քննիչը—գնացէ՛ք ձեր գիւղը. մեզ պէտք է մի քանի բանի քննել, յետոյ երբոր կը կանչենք, էլի եկէ՛ք:

Գիւղացիները սկսեցին սենեակից դուրս գնալ:

—Դու սպասիր, ասեց քննիչը Մանուէլին:

Եւ երբ գիւղացիները դուրս գնացին, քննիչը լուրջութեամբ պահ մի նայեց Մանուէլին, յետոյ ցոյց տուեց քիչ հեռու դրված մի աթոռ և ասեց.

—Նստիր այնտեղ:

Մանուէլը նստեց: Ահա այդ ժամանակ կադին, մի համաւառ հարց ու փորձով իմացաւ Մանուէլի ո՞վ և ինչ լինելը:

—Օղլում, ասեց նա փաղաքական ձայնով—միթէ կարելի է քննիչի և կադին հետ այդպէս խօսել. դու դրանով լրբացրիր գիւղացիներին.

նեղու ժամանակ, և մէկ էլ նրանք են, որոնք գուրկ լինելով դրամական-նիւթականից՝ դարձեալ Սոկրատէսեան դադարաւորն են ծառայում առ ոչինչ համարելով այդ պակասութիւնը, այդ վերջինների թիւը շատ ու շատ քիչ է:

Իսկ կեղծ լուսաւորեալները նրանք են, որոնք տարիներ անցկացնելով այս ինչ կամ այն ինչ երկրի համալսարաններում և լսելով ամբիօնից որոտացող ուսուցչապետին՝ կամ չեն ու գում վերադառնալ իրանց մայրենի երկիրը, որովհետեւ նա գուրկ է լուսաւորութիւն և քաղաքակրթութիւն ասած բանից, կամ եթէ վերադառնում են՝ այն ժամանակ ձեռքները դրնում են վարտիքների զրպանում և չըշում այս կամ այն փողոցներում, հետամուտ լինում այս կամ այն հարուստ ընտանիքի գեղեցիկ օրիորդին ձեռք խնդրելու համար. շատ անգամ էլ հաւաքվում են այս ինչ կամ այն ինչ տեղը—հեռու հիւմար՝ ժողովրդից—սկսում են ճուռաբանել, դա նազան խնդիրների համար տատնակ թանգաղին ժամեր ի դուր կորուսանել և ի լրումն ամենայնի՝ կոնծաբանել ու քնել: Այդպիսիներն աշխատում են, որքան կարելի է, իրանց հեռու պահել ժողովրդեան այն մասից, որն աղքատ է, չունի միջոցներ, որը կարտ է մի օր և է. սփոթիլ խօսքի և որի մտաւոր կարողութիւնը պահանջ է դրում առաջ գնալու:

Այդ կեղծ լուսաւորեալները նայում են ռամիլի, կեղտոտ և չիմար՝ ժողովրդի վրա այնպէս, ինչպէս մահմետականները՝ աղմակոյր խոզի վրա. դժուանում են նրանց հետ խօսելու՝ մի գուցէ իրանց վարկն ընկնի, որովհետեւ նրանց լեզուն մշակված չէ և չանհոռնի է, նրանցից քայլերով հեռու են ման գալիս, որովհետեւ 15 րոպեանց ցլվիչը կը փոշուրվի և մի քանի տատնակ րոպէներ արժող նոր տարադի շորերը կապալանվեն:

Եւ եթէ այսպէս շարունակվի, այսինքն մեր լուսաւորեալների ամենամեծ մասը միայն իրան արտաքին կերպով լուսաւորեալ ու քաղաքակրթութեալ ցոյց տալ և խորշելով ժողովրդեան աղէտ, ռամիլ մասից՝ բնակվի գեղեցիկաչէն քաղաքներում, իմացե՛ք, որ լուսաւորութիւնը մեր ազգի մեծագոյն մասը և նոյնպէս մեզ խառնաբոյնում է, որովհետեւ մենք՝ լուսաւորեալներս խորում ենք նրանցից, իսկ նրանք (ռամիլները) մեզ երբեք հայ չեն անուանում և հետեւապէս մեր և նրանց մէջ կապ չէ լինում: Եթէ պատահմամբ մի օտար ազգութեան պատկանող մարդ մեզ հետ ծանօթանալ քաղաքում, նա կատարեալ այն համոզման կը գայ, որ հայերը շատ են լուսաւորվել ու քաղաքակրթվել, իսկ եթէ նա մտնի մեր գիւղական կեանքի մէջ, կամ բողոքում կը փոփոխ իր համոզումն մեր վերաբերմամբ, երբ կիմանայ, որ իր մօտած գիւղի մարդիկ հայ են, կամ թէ մեր գիւղացուն կրնաւոր մի օտար ազգի տեղ—քիւրդի չեղէ՛ղի և այլն:

Ուրեմն՝ էլ չասենք՝ լուսաւորվել ենք, եթէ լուսաւորված լինենք՝ պիտի մեր գիւղացին էլ լուսաւորված լինի...

Դու չես ճանաչում թէ դրանք ինչեր են. հէնց որ մի անգամ երես տուիր՝ զլխիդ կը նստեն... Եւ չեմ ասում, թէ դու իրաւունք չունես այս կամ այն պահանջելու. ի հարկէ, քեզ ցոյց կը տաք բժիշկի տեղեկագիրը... դու ինչ գիտես, թէ քննութեան տակից ինչից դուրս եկան... —Այո՛ւ, աւելացրեց քննիչը—այստեղ ինձ մօտ են բոլոր թղթերը. տակից շատ վատ բաներ են դուրս գալու:

—Ես ցանկանում էի իմանալ թէ ինչ, ժպտաց Մանուէլը հեղնութեամբ—գործը պատեղ շատ պարզ է. յարձակվել են մեզ վրա, մենք երեքին բռնել յանձնել ենք արդարադատութեան... պատեցե՛ք նրանք. բայց իրանից նրանք լսել են մի ունեցածը. աւաղաները շատ էին և փախան. մենք պահանջում ենք, որ նրանք էլ բռնվեն: Սի՛նալե—լին նա էր, որ մենք սպանվեցինք, վիրաւորվեցինք, իսկ աւաղաներին ոչինչ չը կամեցանք աւելի. դրա պատճառն այն է, որ կառավարութիւնը վատ աչքով է նայում և պատժում է այն հային, որը սպանում է մի թիւրքին:

—Օ՛, ինչե՛ր ես ասում, գոչեց կադին—դու շատ սխալ ես հասկացել. ինչե՛ւ պիտի պատժել նրան, ով խլում է իրան խիւղ կամեցողին... բայց, լսիր, օղլում, բանը դրանումն չէ. ես քեզ իբր մի կըթված մարդու, ասում եմ այն, ինչ որ չէի ասի գիւղացիներին. ասում եմ, որ եթէ այս

Իւրաքանչիւր աղղ լուսաւորված, քաղաքա-
կրթված է համարվում և լինում այն ժամանակ,
երբ այդ աղղի ռամիկ դասակարգին էլ կանգնում
է մտաւոր կարողութեան այն աստիճանի վրա,
որի վրա կանգնած է այդ մի և նոյն աղղի քա-
ղաքացին (ի հարկէ քիչ տարբերութեամբ), երբ
այդ աղղի քաղաքացին և գիւղացին դասակարգերի
մէջ ծնվում են մի և նոյն մտքերը, իրազեկվում
են մի և նոյն գաղափարները և երբ՝ այդ երկու
դասակարգերի մէջ լինելով սերտ կապակցութիւն
առաջ են ընթանում մի և նոյն շարժում, դորձում
են մի և նոյն իդէալով: Այդ բանը չը կայ մեր
աղղի մէջ. հայ քաղաքացին անիրաւացի կերպով
խորշում է հայ գիւղացուց և շատ անգամ փո-
խանակ օրինակ դառնալու նրան՝ աւելի ստոր
միջոցներ է սովորեցնում, իսկ հայ գիւղացին ի-
րաւացի կերպով բողոքում է Աստուծուն քաղա-
քացու դէմ:—այդ լուսաւորված տարրի դէմ, ո-
րովհետեւ երկրորդը չէ լցնում առաջինի կարիք-
ները:—Քաղաքացին անիրաւացի կերպով խոր-
շում է գիւղացուց, որովհետեւ վերջինը մաքուր չէ
հագնվում և քաղաքակրթութիւն ու լուսաւորու-
թիւն չունի (կարծես ծնվելով քաղաքակրթված
և լուսաւորված պիտի լինի գիւղացին), որովհե-
տեւ նա ընթացիկ խնդիրների հետ գործ չունի և
յոյալութեան մէջ իր գրած երկար յօդուածները
չէ կարդում (կարծես քաղաքացի լուսաւորեալը
նրան կարգալ է սովորեցրել, իսկ նա չէ ուղում
կարդալ) և իրազեկում, իսկ գիւղացին բողոքում
է Աստուծուն, որովհետեւ քաղաքացի լուսաւո-
րեալն իրան չէ կրթում, չէ տալիս հնչող միջոց-
ներով իր գործը վերջացնելու դիւրութիւններ, չէ
հասկացնում իրան իր կրօնի առաւելութիւնները,
եկեղեցու արժէքն ու ծիսակատարութիւնները և
նրա տարբերութիւնը՝ ուրիշ եկեղեցիների հետ
համեմատած, որովհետեւ չէ կրթում իր դասակն-
քին... Դա պատրաստ է իր ունեցածի մեծագոյն
մասը տալու քաղաքացի լուսաւորեալին, որ նա
իրան ցոյց տալ իր պակասութիւնները և սովոր-
եցնի հնչող վարկու, ցանկու միջոցները, իսկ
քաղաքացին ասում է՝ «ես ինչպէս գնում տգէտ-
ների մէջ ապրեմ, նրանք գինս չեն իմանայ...»:
Եւ այս բոլորի հետեանքն ինչ է լինում,—այն,
որ մեր ռամիկ ժողովրդեան մեծ մասը զրկա-
րաց ընդունում է ամենայն սիրով ամեն միւս-
նարեբին և պապադասաններին իր մէջ, որովհետեւ
նրանք լցնում են նրա կարիքները, իսկ մենք
գանգատվում ենք ռամիկ դասակարգից, թէ ին-
չու է նա ընդունում բողոքականութիւն և պա-
պադասանութիւն, գանգատվում ենք և էլի ինչ-
նախաբեութեամբ ասում, լուսաւորվել ենք, այո,
ես էլ ասեմ լուսաւորվել ենք և այնքան, որ այդ
լուսաւորութեան ճառագայթների տակ չենք
տեսնում հեռու Եւրոպայից և Ամերիկայից եկող
պապադասան և միսթիսմաբանական ահազին կրօ-
նական հրոսակները, որոնք կրօնով աղղութեան
մէջ ձգում են պառակտումներ...

գործի ետեւից շատ անդին, հետեանքը ձեռք հա-
մար շատ վատ կը լինի, որովհետեւ բռնկածները
լաշեր են, իսկ լաշերը, ինչպէս գիտես, շատ
վրէժնդիր են. եթէ մենք պատմեմք նրանց, էլ
ձեր գիւղի մէջ քար քարի վրա չեն թողնի. այն
ժամանակ չասէք թէ Վլայ մեզ, այս ինչ ա-
րինք... այսպէս չէ, Օսման էֆէնդի, յարեց նա,
դառնալով քննիչին:
—Ի հարկէ, ի հարկէ, շտապեց ասել քննիչը—
ինչ այդպէս էլ կանեն. անցեալ օր բանտն էի
գնացել աւաղակները մէկին քննելու, նա ի մի-
ջի այլոց այսպէս էր ասում. «մեզ թոյլ տուէք
գնանք, թէ չէ մեր աղղականները սաղ Օ վան
քար ու քանդ կանեն...»:
—Ի ուրեք իզուր էք այդքան վախենում, ասեց
Մանուէլը.—լազեր ոչինչ չեն կարող անել, եթէ
դուք մեզ պաշտպանէք. առէք մեզ տասը գի-
ւուստ և ես նրանցով բոլոր լազերին դէմ կը դը-
նեմ...
—Վ. մ.՝... ասեց կաղին.—ինչ երեխայ-երեխայ
խոսում ես, օղլում... բացի դրանից, յարեց նա
խորհրդաւոր կերպով.—ձեր գիւղում կան միւսու-
մաններ, որոնք կարող են ձեր հողին հանել, եթէ
բանց դուրս եկաւ որ նրանք էլ մատ ունեն այդ
գործի մէջ:
—Ի հարկէ, ունեն:
—Այ, տեսար, օղլում, և դեռ երկէ էր, որ բայից:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ
—Լօնդօնից մեզ գրում են. «Չը պէտք է հա-
ւատաք, որ ֆրանսիական նաւատորմի ընդունե-
լութիւնը Անգլիայում անկեղծ սրտից էր բղխում.
ընդհակառակն, դա կատարեալ կեղծաւորութիւն
էր անգլիական կառավարութեան կողմից, քանի
որ անգլիական այժմեան կառավարութիւնը ա-
տելով ատում է Ֆրանսիային: Նաւատորմի ըն-
դունելութեան ժամանակ անգլիական թագաւա-
ռանը, Ուէլսի իշխանը, հեռացաւ Անգլիայից,
որպէս զի խաղաղք չը դառնայ մարկիզ Սօլսբրի
կեղծաւոր քաղաքականութեան. Ուէլսի իշխանը
խիստ մեծ համակրանքով է միշտ վերաբերվել
գէպի Ֆրանսիա և ֆրանսիացիք և անկեղծ կեր-
պով է սիրում Անգլիայի այդ հարեան աղղութիւ-
նը»:
—Կրեալ կողմում գրութիւնը վատթարանում է.
բազմաթիւ գաղթականներ, ամենախղճալի դուռ-
թեան մէջ, անդադար փախչում են Կրեալից գէ-
պի Գոնաստան:
—Աթէնքից մեզ գրում են. «Գործերը վատ են
գնում այստեղ. երկիւղ կայ որ ֆինանսական
զգալի ճգնաժամ է լինելու: Հացահատիկների դի-
նը անցեալ շաբաթվայ ընթացքում բարձրացաւ
250/0-ով և կարծում են որ դարձեալ կը բարձ-
րանայ: Թէև այս տարի հունձը շատ աշոյ էր
Գոնաստանում, սակայն հացը թանկ է, որովհե-
տեւ Գոնաստանում այս տարի արդիւնաբերած
հացահատիկների ամբողջ քանակութիւնը արտա-
հանելից զլխաւորապէս Գերմանիա և Աւստրիա:
Գոնաստան արժեթղթերն ընկնում են. ով որ ձեռ-
քուցի ունի այդ արժեթղթերից, շտապում է ծա-
խել և գոյացած դրամը օտար բանկերն է յանձ-
նում ի պահեստ»:
—Հռոմում, ինչպէս հաղորդում է այնտեղի
«Vera Roma» շաբաթաթերթը, անլսելի չբաւո-
րութիւն է տիրում: Բազմաթիւ գաղթականներ
ուղևորվում են Հռոմից գէպի Ամերիկա: Փողոց-
ները դատարկ են, հիւրանոցներն ու պանդոնե-
րը այլ ևս չեն յաճախում, իրեղենների գրաւա-
կանով դրամ փոխ տուող աղղային բանկը իր
պահեստներում աւելի քան 6 միլիոն ֆրանկ
գումարի իրեղեններ ունի, և այդ իրեղեններն
այլ ևս ոչ ոք չես չէ գնում: Հռոմի մի քանի
թաղեղում կատարեալ սով է տիրում: Փողոցնե-
րում անդադար կը հանդիպէ սկսված և չա-
ւարտած շինութիւններ, քանի որ քաղաքում
տիրում է ֆինանսական ճգնաժամը: Այդ կիսա-
չէն և արդէն քանդվող շինութիւնների մէջ ա-
պաստան են գտնում անտուն բազմաթիւ աղ-
ղայներ:
ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ
Յայտնի ռուս գրող Լեվ Տօլստոյ եկել է Պե-
տերբուրգ: Ռուսաց «Шутка» պատկերազարդ եր-
գիծաբանական շաբաթաթերթը հետեալ սրա-
մտութիւն է անում:
Տօլստոյ ռուս ռամիկի զգեստը հագած, ցիւրնդը
ձեր գիւղի բէզը գոռում էր, որ ամբողջ գիւղը
կրակի կը տայ, եթէ իր վրա մի բառ խօսէք:
—Քննութիւնը ամեն ինչ կը յայտնի, ժպտաց
Մանուէլը. ես խնդրում եմ միայն լաւ քննութիւն
անել:
Նրա այդ խօսքերին ոչ ոք չը պատասխանեց:
Կաղին իր աթոռը մօտ քաշեց քննիչին. երկուսն
էլ նորից կռացան դէպի միմեանց. և նրանց այս
անգամայն փոփոցը տեսց 10 րօպէ, որից յետոյ
կաղին ժպտալով դարձաւ Մանուէլին և ասեց.
—Հատ լաւ, օղլում, մենք կայաւտանք, միա-
միտ եղէք. կարող ես այժմ գնալ:
Մանուէլը ելաւ, բարեկց և դուրս եկաւ:
Հաղիլ թէ նա սենեակից դուրս էր գնացել, որ
կաղին դրան մօտ կանգնած ոստիկանին դարձաւ
և ասեց.
—Ոստիկանագետին գնա և ասա, որ այդ ա-
պաստալին չը թողնեն սարայից դուրս գալու...
բանտարկին և խիստ ծածուկ պահեն:
Եւ երբ ոստիկանը դուրս գնաց, նա դառնալով
քննիչին աւելացրեց.
—Թող այժմ էլ սրամաքանէ...
IV
Չորս օր յետոյ թուանցիլք և ձիթողիք նորից
սարայ կանչվեցին և նորից երկար քննվեցան:
Երեկոյեան դէմ նրանք խմբով դուրս եկան սա-
մար:

զլինի դուրս է գալիս վազօնից. երկաթուղու
կայարանում սպասում է նրան շաբաթաթերթի
ընկաւորները, որը անմիջապէս ընդառաջ է վա-
զում յայտնի հեղինակին, բարեւում է նրան և
խնդրում է մի քանի հարցերին պատասխանել:
—Ասեցէք, խնդրեմ, մաէսարօ, դուք շարու-
նակում եք հերքել բաղդը մարդկային կեանքի
մէջ...
—Այո, շարունակում եմ.
—Եւ շարունակում եք չը դիմադրել չարիքին.
—Այո.
—Այնպէս որ եթէ, զիցուք մարդուն ապտակ
տան...
—Դա չառ լաւ բան է.
—Իսկ անձնասպանութեան մասին մնում էք
ձեր առաջվայ կարծիքին.
—Անիտիտ.
—Օրինակ եթէ կլին փախչի...
—Ջուրն ընկէք.
—Իսկ եթէ նոր կօչկենքս նեղացնում են
ինձ...
—Այն ժամանակ կարող էք կախվել.
—Իսկ ինչպէս է ձեր ստամոքսի առողջութիւ-
նը...
—Այդ մասին դուք կը կարդաք իմ յիշատակա-
րանի մէջ, որը շուտով լոյս կը տեսնէ.
—Մէրսի, մաէսարօ, օ րըվուար:
* * *
Նոր մարդարեւութիւն: Շարունակելով և-
պիսկոպոսը, աւստրո-ունգարական լրագիրների
խօսքերով, մարդաբանութեան է, որ 1894 թիւին եւ-
րոպական պատերազմ կը լինի: Եւրոպական ընդ-
հարման աւելի կը տայ Բալկանեան թերակղ-
զին: Բոսնիան և Հերցեգովինան կը լինեն կռա-
ծարկներ: Այդ պատերազմը չը լաված բնաւո-
րութիւն կունենայ: Առաջին կուսիներից անմիջա-
պէս յետոյ, Եւրոպայում ընդհանուր յեղափոխու-
թիւն կը սկսվի: Եւրոպայի քարտէզը կատարեալա-
պէս կը փոխվի: Վերջինս կը կազմէ մեծ գեր-
մանական հանրապետութեան մի մասը Վերին և
Ստորին Աւստրիայի հետ միասին: Իտալիան, որ-
պէս դաշնակցական հանրապետութիւն, մի փոքր
պետութիւն կը լինի պապի նախադահլեթեան
տակ:

ՄՇԱԿԻ ՀՅՈՒԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍՏՈՒԱԳԻՐ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 սեպտեմբերի: «Новое Время»
լրագիրը հաղորդում է, որ պետական խորհրդին
առաջարկված է անդրկովկասեան երկաթուղու
կրանսօղթակ-Մոսկա-Կարա նոր ճիւղի կառուցման
նախագիծը:—Նոյն լրագիրը հաղորդում է, որ մի
քանի ռուս դրամատերեր թոյլտուութիւն են
խնդրում միացնել Ամու-Կարախ կասպից ծովի
հետ նաւահնաց ջրանցքով: այն պայմանով, որ
ձեռնարկողներին թոյլատրվի շոգենաւեր բանեց-
նել Ամու-Կարախով և ջրանցքով:—Երեկ ճանա-
պահ ընկաւ ժողովրդական լուսաւորութեան մի-
նիստը մի քանի ռուս միաբանական չրջաններ
աչքի անցկացնելու համար և պետական կառու-
նների մինիստրը՝ ձկան արդիւնահանութեան հետ
ծանօթանալու համար: Վերջինը կը գնայ մինչև
Աստրախան, այնտեղից մինչև Յարկին բարձրա-
նալով, կերթայ Կրիմ, ուր կանցկացնէ աշնան մի
մասը:

—Ինչպէս եղաւ, հարցրին այն հետաքրքրեա-
լը, որոնք միշտ լինում են սարայի մէջ:
—Ներքեցիք... ասեց գիւղի տանուէրը:
—Ներքեցիք... ուրեմն աւաղակներին բաց են
թողնելու:
—Այո, նրանցից զիր առին, որ էլ այդպէս ա-
ւաղակութիւններ չը պիտի անեն:
Հետաքրքրեցին մի այնպիսի մեծ ծիծաղ ար-
ձակեցին, որ սարայի մէջ վխտացող շները բոլո-
րը միասին սկսեցին հաչել:
Այո, գիւղացիք աւաղակներին ներել էին և
այդ ներման համար շատ էր աշխատել կաղին.
չէ որ նա հաշտարար դատաւոր էր:
Եւ այսպէս գիւղացիք վերջացնելով ընդ միշտ
իրանց գործը քաղաքի հետ, խմբով վերադարձան
գիւղը:
Երբ անցել էին բաւական ճանապարհ ու Սո-
վետ-Ջերմուկ գիւղի մօտ նստել հանգստանում
էին, նկատեցին որ քաղաքի կողմից գէպի իրանց
են գալիս երեք ձիււորներ, սրարչաւ քշելով ի-
րանց ձիւերը:
—Տղերք, սրանք ովքեր են, գուցէ Թուանջի
տանուէրը.—փիւս են քշում:
—Ի՛նչ, մեզ ինչ, խօսեց Ձիթողի տանուէրը,
մենք խօ մի գործը վերջացրինք. ա ք ը ը ը
ու պրծանք... ախպեր, էս երկու շարքի էր, որ
մի կտոր հալալ հաց չէի դրել բերանս:

ՍՏՈՎՈՒՄ, 2 սեպտեմբերի: Այստեղ հիւր է
խտալական պրինցը:
ՊԱՐԻՋ, 2 սեպտեմբերի: Երեկ սերբական
թագաւորը ճանապարհ ընկաւ Բելգրադ:
ՉԱՆՉԻՐՈՒՐ, 2 սեպտեմբերի: Տեղացիները ամ-
բողջապէս սրի անցրին Չալվիսկու էկապեղիցիան.
սպանված են 10 օֆիցերներ և 300 նեզրներ.
սպիտակամորթներից հինգը անհետացան: Ինչպէ-
զիցիան զրկվեց երեք թնդանօթներից և մեծ քա-
նակութեամբ ձեռքի զէնքերից:
ԼՕՆԴՈՆ, 3 սեպտեմբերի: Կ. Պօլսից լուր է
տարածվել, որ իբր թէ անգլիական պատերազ-
մական նաւերը գրաւեցին Սիգրի փոքրիկ կղզին,
Միտիլենայի մօտ: «Times» լրագիրն այդ լուրը
անհիմն է համարում և նկատում է, որ այդ լու-
րին աշխատել են տարածել յայտնի բանկային
տնները, որոնք աշխատում են զփուարութիւններ
պատճառել ռուսաց նոր փոխառութեան հրատա-
րակմանը Պարիզում:
ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 սեպտեմբերի: Նահանգապետ-
ներին ուղարկված ներքին գործերի մինիստրի
չրջաբերականում հաղորդում է, որ սովետանջ
տեղերում ժողովրդին ուստեսի պաշար մատա-
կարարելու համար որոշված է այժմ մօտ 22 միլիոն
րուբլի. մի և նոյն ժամանակ առանձին ուշա-
դրութիւն է դարձված կարօտ աղղաբանակութեա-
նը բաւարար աշնանացան սերմ մատակարարելու
համար, որպէս զի սպառողի կարելի լինի ապա-
գայ պողաբերութիւնը. այդ կողմից կատարելա-
պէս բարեկարգ հետեանքներ են ստացվել: Շըր-
ջաբերականին կցված են անպողաբերութիւնից
աւելի շատ վնասված նահանգների անունները,
որոնք են՝ Նիժնեգորոն, Տուլայի, Իրադանի,
Սիմբիրսկի, Կազանի, Վոսթոկի, Սարատովի, Սա-
մարայի, Վիսակայի, Ռոֆի, Օրենբուրգի, Պէն-
զայի և Տամբովի նահանգները:—Հրատարակված
է մի օրէնք, որով եկող տարուց տարեկան
20,914 րուբլի է յատկացրած՝ միսիոնարներ պա-
հելու համար արեւմտեան և հարավային տասը
թիւերում:—«Гржеданин» լրագիրը հաստատ
աղղիւրից լսել է, որ ֆինանսների մինիստրու-
թեան մէջ մտադրութիւն կայ անյապաղ միջոց-
ներ ձեռք առնել սովետանջ տեղերում պետա-
կան աղնական բանկի փոխառութիւններ վերաբե-
րմամբ, որպէս զի նրանց կառուածները կարելի
լինի աղատել աճուրդով ծախվելուց:
ՕԴԵՍՍ, 4 սեպտեմբերի: Այստեղ իրական ա-
ւաւորական կուրսեր են բացված: Դասընթացը
մի տարվայ է. 40 ունկնդրներ գրվեցան:
ՄԱԿԻՐԻ, 4 սեպտեմբերի: Տօլէգի նահանգում
գետերի ափերից դուրս գալը մեծ հեղեղներ գո-
յացրեց, որի ժամանակ մօտ 2,000 մարդիկ
խեղդվեցան: Օգնութիւն հասցնելը անկարելի է,
որովհետեւ բոլոր հաղորդակցութիւնները կարված
են:
Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ
Սեպտեմբերի 3-ին
Լօնդօնի վրա 10 ֆունտ արծէ . . . 93 ր. 50 Կ.
Բերլինի վրա 100 մարկ . . . 45 > 95 >
Փարիզի վրա 100 ֆրանկ . . . 36 > 85 >
Ոսկի . . . արծէ . . . 7 > 53 >
Մաքսային կուպօններ . . . 151 > >
Արծաթ . . . 1 > 14 >
Բորսային դիվիդենդներ . . . 41/4 > 51/2 >
Պետ. բանկի 5% տոմս 1 չրջանի . . . 103 > 25 >
— 2-րդ . . . 103 > 75 >
— 3-րդ . . . — > — >
— 4-րդ . . . — > — >
— 5-րդ . . . — > — >
— 6-րդ . . . 102 > 75 >

Ձիււորները մօտենում էին:
—Թուրք են երևում, ասեց մի գիւղացի:
—Չէ, տօ, լազեր են:
Եւ նրանք մի կողմ անցնելով, սպասեցին որ
ձիււորները անցնեն:
Բայց սրանք թեթեւաբեւ ձիւերի ընթացքը և
երբ հասնում էին գիւղացիներին, կանգ առին և
ահա այդ ժամանակ նրանցից մէկը գուցէ գիւ-
ղացիներին.
—Գեաւորներ, ճանաչում եք մեզ:
Գիւղացիները սարսափեցին. իրանց բռնած ե-
րեք աւաղակներն էին, որոնք այժմ աղատված,
ձիւերի վրա և ոտից մինչև գլուխ զինված գնում
էին իրանց տեղը:
—Տեսնում եք, գեաւորներ, ասեց միւս աւա-
ղակը.—որ մեզ ոչինչ չը կարողացաք անել. բայց
դուք մեզ ստիպեցիք երկու շաբաթ բանտում
նստել, մենք այդ բանի վրէժը այնպէս հանեցք,
որ անցեալ օրվայ կոտորածին փառք տաք...
Ասեց ձիււորը, դարձաւ միւսներին և գուցէ.
—Գնանք... այսօր յոգնած ենք, սրանց հետ
մենք հաչել կունենանք ապագայում:
Յետոյ ծիծաղեցին, մտրակեցին ձիւերը և սար-
սափած գիւղացիներին առջևից անցնելով՝ անհե-
տացան հեռուները...
Վ. Փափաղեանց

